

ՇՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՆԱՄՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ՇՆԵՐԻ ՊԱՀՄԱՆ
ՍԱՆԻՏԱՐԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՎ ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. ԱԿԱՆՆԵՐ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՂ ՇՆԵՐԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Լավ ֆիզիկական և հոգեկան առողջությունը բոլոր աշխատող շների համար հիմնական նախապայմանն է: Հիվանդությունների նկատմամբ դիմադրողականությունը, լավ ֆիզիկական վիճակը, ակտիվությունը, դիմացկունությունը, մոտիվացիան և սովորելու ունակությունն առաջնային նշանակություն ունեն արդյունավետորեն աշխատող ԱՀՇ-ի պահպանման համար:

2. Այս պահանջները պայմանավորված են պարբերական և բազմակողմանի խնամքի ապահովման հետ, որը համակցվում է մանրակրկիտ վարժեցման հետ: Այս պահանջներն անտեսելը կարող է հանգեցնել գործունեության վատ կատարմանը, հաճախակի հիվանդություններին և նույնիսկ մշտական անաշխատունակությանը կամ մահվան: Վատ մշակված պատվաստումների ժամանակացույցերը կարող են, օրինակ, հանգեցնել համաճարակային հիվանդությունների տարածմանը, անաշխատունակությանը կամ մահվան:

2. ՆԱԽՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ

3. Գենետիկորեն փոխանցվող հիվանդությունները և առանձնահատկությունները կարող են թույլ չտալ շանը զարգացնել համապատասխան ունակությունները: Վարժեցման համար շների ընտրության ընթացքում նախնական հետազոտությունը պետք է ներառի անասնաբուժական հետազոտությունը և ցանկալի ու անցանկալի որակների հայտնաբերման համար իրականացվող փորձարկումը:

3. ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4. Որակյալ խնամքը հիմնված է հետևյալ պահանջների ապահովման վրա՝

- 1) համապատասխան հարուստ սնունդը՝ ներառյալ աճի և բարդ ֆիզիկական աշխատանքի կատարման համար տրվող հավելումները.
- 2) տարածված հիվանդությունների դեմ պատվաստումը.
- 3) առողջական վիճակի պարբերական ստուգումները և բուժումը.
- 4) ֆիզիկական և մտավոր վարժությունները.
- 5) ընդհանուր հիգիենայի բարձր ստանդարտները.
- 6) շների պահպանման կամ տեղավորման համապատասխան պայմանները.
- 7) անասնաբուժական բարձրակարգ խնամքի ապահովումը.
- 8) փոխադրման պատշաճ հարմարությունները և ընթացակարգերը:

4. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՍՏՈՒՄԸ

5. Շները սովորաբար փորձեր են կատարում շարունակել աշխատանքը նույնիսկ առողջության հետ որոշակի խնդիրների առաջացման դեպքում: Հետևաբար, անհրաժեշտ է հասկանալ և տեղյակ լինել հիվանդությունների ու վնասվածքների բոլոր հնարավոր նշանների մասին:

6. Պատշաճ ֆիզիկական խնամքը ներառում է ընթացիկ հսկողությունը, ինչպես նաև շան մարմնի առօրյա հետազոտությունը մակաբույծների, հիվանդությունների կամ վնասվածքների հայտնաբերման նպատակով:

7. Յուրաքանչյուր շան համար պետք է վարվի բժշկական քարտ (գրանցամատյան): Պատվաստումների, այլ կանխարգելիչ միջոցառումների, ճիճուներից ազատման, հիվանդությունների, վնասվածքների և այլ բուժումների մասին տվյալները պետք է ներառված լինեն այդ գրանցամատյանում: Քարտում գրանցման ենթակա, առողջության հետ կապված հարցերը սահմանվում են ԱԳԱՄ-ի կողմից: Յուրաքանչյուր շան համար պետք է բացվեն և վարվեն պատվաստումների քարտեր:

8. Շան հետ աշխատող անձին տրամադրվում է պատվաստումների քարտի օրինակը, իսկ բնօրինակը պահվում է ծրագրի կառավարչի կամ անասնաբույժի մոտ:

9. Շունը պետք է հետազոտվի շան հետ աշխատող անձի կողմից յուրաքանչյուր աշխատանքային օրն սկսելուց առաջ, դրա ընթացքում և ավարտից հետո, իսկ շանը

վերահսկող անձը պետք է անմիջապես տեղեկացվի ցանկացած ախտանիշների կամ շեղումների հայտնաբերման դեպքում:

10. Առողջական վիճակի առօրյա ստուգումների արդյունքները պետք է գրանցվեն գրանցամատյանում: Լուրջ առողջական խնդիրների կամ այնպիսի դեպքերի մասին, երբ շունը չի արձագանքում բուժմանը, պետք է տեղեկացվեն անասնաբույժին՝ նրա կողմից հետագա գնահատում իրականացնելու նպատակով:

5. ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ

11. Շների առավել բազմակողմանի ստուգումը պետք է իրականացվի պարբերաբար, նախընտրելի է ամսական կտրվածքով:

12. Ստուգումը պետք է անցկացվի անասնաբուժական ծառայության փորձառու սանիտարի, հատուկ վերապատրաստում անցած շան վերահսկողի կամ անասնաբույժի կողմից: Հետազոտության արդյունքները պետք է գրանցվեն շան քարտում:

6. ՇՆԵՐԻ ԽՆԱՄՔՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

13. Բոլոր աշխատողները, ում ուղղակի պատասխանատվությունն է իրականացնել շների խնամքը (սովորաբար դրանք են շների հետ աշխատողները, սակայն կարող են ներառվել նաև շների բուժարանների աշխատողները), պետք է հիմնական դասընթացներ անցնեն շների խնամքի և պահպանման ուղղությամբ, որոնք կներառեն հետևյալ թեմաները՝

- 1) առողջության պահպանման նկատմամբ ընդհանուր պահանջները.
- 2) առողջությանն սպառնացող և հիվանդությունների տարածված վտանգները.
- 3) մաշկային հիվանդությունները և մակաբույծները.
- 4) համաճարակային հիվանդությունները.
- 5) հիվանդությունների փոխանցումը մարդկանց.
- 6) կլիմայական պայմանների (ցրտի և շոգի) ազդեցությունը շների վրա.
- 7) թունավորության նշանները և ախտանիշները.
- 8) առողջական վիճակի ստուգումների պահանջները և ընթացակարգերը.
- 9) անասնաբուժական խնամքի նկատմամբ պահանջները և ընթացակարգերը.

- 10) պատվաստումների պահանջները.
- 11) շների սնունդը և կերակրումը.
- 12) պահպանման վայրերի (բուծարանների և մեծավանդակների) պահանջները.
- 13) կարանտինի պահանջները.
- 14) շների տեղափոխությունը (տեղական, ազգային և միջազգային):

7. ՇՆԵՐԻ ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԽՆԱՄՔԸ

14. Շների կողմից աշխատանք իրականացնելու ամբողջ ընթացքում

1) տեղում պետք է առկա լինի մեկ անձ, ով տիրապետում է անհրաժեշտ գիտելիքներին և ունակություններին շներին անհետաձգելի բուժօգնություն տրամադրելու համար.

2) տեղում պետք է առկա լինեն համապատասխան անասնաբուժական սարքավորումները, որոնք նախատեսված են շների բուժման համար: Դա կարող է լինել բժշկական գործիքների նույն հավաքածուն, ինչ օգտագործվում է մարդկանց բուժման համար.

3) պետք է մշակված լինի անհետաձգելի իրավիճակների դեպքում շների էվակուացիայի ծրագիրը, որը ընթացակարգեր է ներառում ականապատ դաշտից շների անվտանգ դուրսբերման և ամենաարագ և առավել ապահով ճանապարհով շանն անասնաբուժական անհրաժեշտ օգնության տրամադրման վայր տեղափոխելու վերաբերյալ, երբ շները չեն աշխատում, այսինքն ոչ աշխատանքային ժամերին կամ հանգստյան օրերին.

4) պետք է նշանակված լինի հերթապահ մի անձ, որին հնարավոր է կանչել անհրաժեշտության դեպքում, և, ով ունի շներին անասնաբուժական խնամք տրամադրելու անհրաժեշտ գիտելիքները և ունակությունները.

5) պետք է մշակված լինի հիվանդ կամ վնասվածքներ ունեցող շներին համապատասխան անասնաբուժական կետ տեղափոխման ծրագիր:

8. ՄՆՆԴԱԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

15. Աշխատող շներին անհրաժեշտ է լիարժեք սնունդ, որը պարունակում է սննդաբար նյութերի, հանքային աղերի և վիտամինների անհրաժեշտ չափաբաժիններ:

16. Հատուկ շների համար նախատեսված գործարանային կերը պարունակում է անհրաժեշտ քանակությամբ հիմնական սննդարար նյութերը և ունի բավարար որակ: Դրանք են՝

1) չոր սնունդ: Չոր սնունդը պարունակում է մոտավորապես 10% ջուր: Չոր սնունդ արտադրող բոլոր տարածված ընկերությունների սնունդը պարունակում է միանման սննդարար նյութերը: Չոր սնունդը կարող է առանց ստեղծվելու պահվել մի քանի շաբաթների ընթացքում այն պայմանով, որ սնունդը պաշտպանված լինի խոնավությունից և մակարոյծներից, սակայն, եթե չոր սնունդը պահվում է չափազանց երկար ժամանակ, այն կարող է կորցնել իր մեջ պարունակվող սննդարար նյութերի մի մասը:

2) կիսաչոր սնունդ: Կիսաչոր սնունդը պարունակում է մոտավորապես 25% ջուր: Այն պետք է պահպանվի այնպես, ինչպես չոր սնունդը: Կիսաչոր սնունդն ունի շաքարի բարձր պարունակություն, որն այն անընդունելի է դարձնում շաքարային դիաբետով տառապող շների համար:

3) պահածոյացված սնունդ: Գոյություն ունի երկու տեսակի պահածոյացված սնունդ՝ լիարժեք (որը պարունակում է հացահատիկներ) և մսային (որը պարունակում է միայն միս): Պահածոյացված սնունդը չի ապահովում հավասարակշռված սննդակարգ և պետք է լրացվի սննդի այլ տեսակներով: Տան պայմաններում պատրաստված սնունդը կարող է լավ այլընտրանք լինել այն դեպքերում, երբ բարդ է ձեռք բերել շների համար նախատեսված սնունդ կամ, եթե շան համար պահանջվում է հատուկ սննդակարգ: Այն նաև հնարավորություն է տալիս որոշակի բազմազանություն մտցնելու սննդի մեջ: Հեշտ է պատրաստել հավասարակշռված սնունդ՝ օգտագործելով հիմնական բաղադրիչներ, ինչպիսիք են միսը և բրինձը: Կարևոր վիտամինները և հանքային նյութերը կարող են տրամադրվել՝ ավելացնելով լյարդ, սննդային ոսկրեր, եգիպտացորենի ձեթ և աղ:

17. Սովորական շան համար սննդակարգի կարևոր բաղադրիչներ են ջուրը, պրոտեինները, յուղը, հանքային նյութերը, վիտամինները և ածխաջրերը: Մեծահասակ շների մոտ տարբեր են տարբեր տեսակի սնունդ մարսելու կարողությունները: Հետևաբար, կարևոր է շանը կերակրել ճիշտ չափաբաժիններով:

18. Որոշակի հիվանդություններ՝ ներառյալ ազդրի դիսպլազիան, կարող են մասամբ առաջանալ սխալ սննդի հետևանքով:

19. Սխալ սննդակարգը կարող է հանգեցնել վիտամինների պակասությանը, մասնավորապես, ռախիտի (թույլ և հեշտությամբ ծավոող ոսկրեր) կամ օստեոպորոզի (թույլ և փխրուն ոսկրեր): Անբավարար սնունդը կարող է նաև հանգեցնել էներգիայի, ուժի, կենտրոնացման պակասությանը և քաշի կորստին: Որոշակի բաղադրիչների չափից դուրս օգտագործումը, ինչպիսիք են վիտամինները և հանքային նյութերը, կարող է առաջացնել թունավորումներ և ալերգիաներ մաշկի ու լորձաթաղանթի վրա: Ավելցու-

կային սնունդը կարող է նաև հանգեցնել ոսկրերի ձևախախտմանը, մասնավորապես, երիտասարդ կամ խոշոր շների մոտ:

20. Լավ առողջության և դիմացկունության ապահովման համար անհրաժեշտ սննդի քանակը տարբերվում է՝ կախված շան ֆիզիկական պահանջներից: Բոլոր շներն ունեն սնունդն էներգիայի վերածելու տարբեր արագություններ, նույնիսկ նույն տեսակի շները: Հետևաբար, շան մարմնի զանգվածը պետք է չափվի ամսական կտրվածքով, և քաշի ցանկացած զգալի փոփոխություն պետք է շտկվի՝ սննդի մեջ համապատասխան փոփոխություններ կատարելով:

21. Շներին անհրաժեշտ է պարբերաբար խմել այնպիսի որակի թարմ ջուր, որն օգտագործվում է մարդկանց կողմից: Ավելի շատ ջուր է անհրաժեշտ, եթե շունն ունի երիկամային խնդիրներ կամ փորլուծություն: Անհրաժեշտ է վերահսկել շան կողմից ջրի օրական սպառումը, և ջրի նորմալ սպառումից ցանկացած ակնհայտ շեղումներ պետք է հետազոտվեն:

9. ՇՆԵՐԻ ԲՈՒԾԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԵԾԱՎԱՆԴԱԿՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

22. Իրենց հիմնական կացարանային կարիքները բավարարելու համար շներին պետք է տրամադրվի մաքուր, առողջ կացարան, որտեղ ցածր են սթրեսի գործոնները:

23. Կացարանները պետք է՝

1) ունենան անհրաժեշտ չափերը՝ ապահովելու համար հարմարավետության, շարժման ազատության և բնական վարքագծի արտահայտման ազատության որոշակի մակարդակ.

2) ունենան ոչ սղլիկ, մաքրման համար հեշտ և չոր հատակ.

3) ապահովեն շների համար թարմ ջրի մշտական հասանելիությունը.

4) ապահովեն շների համար բնական լույսի և թարմ օդի հասանելիությունը.

5) ունենան հանգստի և վարժությունների հարմար տարածքներ.

6) ապահովեն շների մոտ մարդկանց կամ այլ շների ներկայությունը:

24. Բուծարանները և մեծավանդակները շների հանգստի կամ քնի համար նախատեսված վայրեր են: Միայն լիազորված անձինք, ինչպիսիք են շների հետ աշխատողները, վարժեցնողները կամ բուծարանների ու մեծավանդակների աշխատողները պետք է հնարավորություն ունենան մուտք գործելու այդ վայրերն առանց նախնական թույլտվության:

25. Բուծարանների և մեծավանդակների մշտական անձնակազմը պետք է հիմնական կրթություն ստանա շների ընդհանուր խնամքի և բուծարանների ու մեծավանդակների պահպանման վերաբերյալ:

26. Հրդեհի կամ այլ արտակարգ իրավիճակների համար պետք է մշակված լինեն հատուկ պլաններ, և բուծարանների ու մեծավանդակների աշխատողները պետք է վերապատրաստվեն այդ պլանների համաձայն:

27. Ժամանակավոր բուծարանները և մեծավանդակները հաճախ ստեղծվում են հեռավոր վայրերում գործողություններ ծավալելիս: Որտեղ հնարավոր է, ժամանակավոր բուծարանները և մեծավանդակները պետք է բավարարեն սույն չափորոշիչներով սահմանված բոլոր պահանջները:

28. Ժամանակավոր բուծարանները և մեծավանդակները կարող են ունենալ ցանկացած կառուցվածք, իսկ որոշ դեպքերում կարճ ժամանակահատվածի համար կարող են օգտագործվել շարժական վանդակները:

29. Ժամանակավոր բուծարաններ և մեծավանդակներ ստեղծելու ժամանակ անհրաժեշտ է հետևել հետևյալ պահանջներին՝

1) բուծարանը կամ մեծավանդակը պետք է լինի մաքուր, տաք, չոր և լավ օդափոխվող: Ցուրտ եղանակի դեպքում կարող է բարդ լինել այդ տարածքը տաք պահել և ապահովել օդափոխությունը, հետևաբար, անհրաժեշտ է գտնել փոխհամաձայնեցված մի տարբերակ.

2) շների քնելու տարածքը պետք է հողից բարձր լինի 10 սմ-ով և տեղակայված լինի բլուկների ու հենարանների վրա.

3) շները պետք է պաշտպանված լինեն մակաբույծներից.

4) բուծարանը կամ մեծավանդակը պետք է ապահովի պայմաններ, որպեսզի ոչինչ չշեղի կամ չանհանգստացնի շներին.

5) նույն բուծարանում կամ մեծավանդակում կարող են տեղակայված լինել ոչ ավելի, քան 3 շներ, և նրանք պետք է տեղակայված լինեն միասին միայն միմյանց հետ իրենց հարմար զգալու դեպքում.

6) մաքուր խմելու ջուրը պետք է միշտ հասանելի լինի շների համար: Մաքուր ջուրը պետք է հասանելի լինի նաև շներին լողացնելու և նրանց կացարանները մաքրելու նպատակով.

7) շների հիվանդության դեպքում պետք է ստեղծվեն կարանտինի համար ժամանակավոր տեղամասեր:

10. ԿԱՐԱՆՏԻՆԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

30. Շները ենթարկվում են կարանտինի՝ կանխարգելիչ համար հիվանդությունների կամ մակաբույծերի տարածումը: Կարանտինի ժամանակահատվածը հաճախ անհրաժեշտ է նոր ստացված շների համար, որոնք պետք է անցնեն բժշկական գնահատում նախքան բուծարաններում և մեծավանդակներում այլ շների հետ հանդիպելը:

31. Առկայության դեպքում անհրաժեշտ է հետևել կարանտինի ցանկացած ազգային պահանջներին ինչպես երիտասարդ շներին վարժեցման և աշխատանքների իրականացման համար երկիր բերելու, այնպես էլ շների վարժեցված խմբերը մեկ այլ երկրում աշխատելու համար տեղափոխելու ժամանակ: Այս ընթացակարգը բավականին ծախսատար է և ժամանակատար ու պետք է ներառվի պլանավորման վաղ փուլերում:

32. Բոլոր բուծարանները և մեծավանդակները պետք է ունենան կարանտինի համար առանձնացված տարածք: Շներ պահող կազմակերպության կողմից կարանտինի համար առանձնացված տարածքի ստեղծման և կառավարման համար պետք է ապահովվեն հետևյալ պահանջները՝

1) կարանտինի համար նախատեսված տեղամասը պետք է գտնվի այլ շների կացարաններից բավարար հեռավորության վրա, որքան հնարավոր է հեռու: Լավագույն հեռավորությունն է 300 մ և ավելի:

2) կարանտինի համար նախատեսված տարածքը պետք է ունենա առանձին ջրի և կոյուղու համակարգեր:

3) կարանտինի համար նախատեսված տարածքները պետք է կառուցված լինեն այնպես, որ այլ կենդանիների կամ թռչունների համար հնարավոր չլինի մուտք գործել այդ տարածք, քանի որ այս կենդանիները կարող են տարածել մանրէներ, վիրուսներ և մակաբույծներ այլ շների միջև:

4) կարանտինի համար նախատեսված տարածքները պետք է կառուցված լինեն այնպես, որ խոշոր կենդանիները չկարողանան մուտք գործել այնտեղ ուժ գործադրելու միջոցով:

5) բուժման արդյունքում առաջացած թափոնները պետք է զգուշորեն վերացվեն հիվանդությունների տարածումը կանխարգելիչ նպատակով: Համաճարակային հիվանդությունների բուժման ժամանակ բժշկական թափոնները պետք է այրվեն:

6) կարանտինի տակ գտնվող շների հետ կամ կարանտինի համար նախատեսված տեղամասերում աշխատողները չպետք է շփում ունենան այլ շների կամ նրանց սովորական կացարանների հետ՝ առանց հիվանդությունների կամ մակաբույծերի տարածումը կանխելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու, ինչպիսիք են հագուստի, ձեռնոցների և կոշիկների ախտահանումը կամ փոխումը:

7) կարանտինի տակ գտնվող շների հետ կամ կարանտինի համար նախատեսված տեղամասերում աշխատողների կողմից օգտագործված հագուստը և սարքավորումները պետք է տեղակայվեն այլ հագուստից ու սարքավորումներից առանձին:

11. ՇՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ

33. Շների փոխադրման ընթացքում անհրաժեշտ է ապահովել հետևյալ ընթացակարգերը՝

1) փոխադրման ընթացքում շունը պետք է ուղեկցվի իր հետ աշխատող անձի կամ շան համար վստահելի այլ անձի կողմից: Փոխադրման ընթացքում շները չպետք է թողնվեն միայնակ առանց անհրաժեշտության:

2) շները պետք է միշտ տեղափոխվեն շարժական վանդակներով կամ շների փոխադրման համար հատուկ նախապատրաստված տրանսպորտային միջոցներով: Երբ շունը տեղափոխվում է ավտոմեքենայի ներսում, ավտոմեքենայի այն հատվածի պատուհանները, որտեղ գտնվում է շունը, պետք է ծածկվեն արտացոլող ժապավենով կամ մեկուսացնող նյութով՝ գերտաքացումից խուսափելու նպատակով:

3) շները պետք է միշտ բարձրացվեն մեքենայի մեջ դնելիս կամ նրա միջից հանելիս: Ցածր կցորդներ ունեցող մեքենաների մեջ շների բարձրացման և իջեցման ժամանակ նրանց անհրաժեշտ է բարձրացնել պարանոցից և ուսերից: Բարձր կցորդներ ունեցող մեքենաների դեպքում մեքենաների մեջ բարձրանալիս կամ այնտեղից իջեցվելիս շները պետք է սկզբից տեղադրվեն նրանց հետ աշխատող անձանց ուսերին:

4) փոխադրման ընթացքում անհրաժեշտ է ապահովել պատշաճ օդափոխությունը, մասնավորապես, եթե մեքենաները կանգնեցվում են շոգ կլիմայական պայմաններով տարածքներում: Շների գտնվելու վայրը կամ վանդակը պետք է պաշտպանված լինեն չոր օդից, արտանետված գազերից և փոշուց: Եթե շները տեղափոխվում են փոշուտ ճանապարհներով բաց մեքենաների միջոցով, շներ տեղափոխող մեքենան պետք է գտնվի մեքենաների շարանի սկզբում այլ մեքենաներից առաջացած փոշուց խուսափելու համար:

5) երկար ճանապարհների դեպքում շները պետք է յուրաքանչյուր երկու ժամը մեկ ջուր խմեն և վարժեցվեն առնվազն 10 բույներին ընթացքում յուրաքանչյուր չորսը ժամը մեկ: Շների միջև կռիվների կանխարգելման նպատակով կարող է անհրաժեշտ լինել շներին հագցնել դիմակներ և մեկ առ մեկ զբոսանքի հանել իրենց հանգստյան ժամերին:

6) օդային ուղիներով շների միջազգային փոխադրումների դեպքում շների վանդակները պետք է համապատասխանեն Օդային տրանսպորտի միջազգային միության (OSU) կողմից ներկայացված կանոնակարգերին (www.iata.org): Վանդակների չափի վերաբերյալ նույն կանոնակարգերը կարող են կիրառվել նաև ցամաքային կամ ծովային փոխադրումների դեպքում:

12. ՓՈԽԱԴՐՄԱՆ ՎԱՆԴԱԿՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

34. Փոխադրման վանդակները պետք է պատրաստված լինեն ապակեթելերից, մետաղից կամ ամուր պլաստմասսայից, քանի որ այս նյութերն առավել ամուր են և առավել հեշտ են մաքրվում, քան փայտե վանդակները:

35. Փոխադրման վանդակները պետք է ունենան ամուր շրջանակ՝ առանց դուրս եկող մեխերի կամ հեղույսների: Մետաղական վանդակների օգտագործումից անհրաժեշտ է խուսափել չափազանց շոգ կամ ցուրտ եղանակների դեպքում հաշվի առնելով մետաղի ջերմության անցանելիության հատկությունը:

36. Վանդակի մուտքը պետք է փակված լինի կախիչներից ամուր ամրացված կամ շարժական դռներով, որոնք ծածկված են ամուր կպցրած ձողերով, եռակցված ցանցով կամ հարթ մետաղական ցանցով:

37. Շարժական վանդակը պետք է բավականաչափ մեծ լինի, որպեսզի թույլ տա շանը փոխել իր դիրքը և շրջվել նրա ներսում, սակայն այն նաև չպետք է լինի ավելի մեծ, քան անհրաժեշտ է: Փոքր վանդակը կկանխարգելի տեղափոխման ընթացքում վանդակի ներսում անկումների հետևանքով առաջացած վնասվածքները:

38. Վանդակի հատակը պետք է ծածկված լինի ոչ սղիկ գորգով կամ կտորով հատակի վրա սղալու արդյունքում վնասվածքներից խուսափելու նպատակով: Անհրաժեշտության դեպքում, հիմնական օդափոխության պատուհանից բացի, կարող են լինել նաև ճեղքվածքներ և անցքեր, որոնք հավասարաչափ բաշխված են ամբողջ վանդակով:

39. Շունը պետք է հնարավորություն չունենա իր քիթը կամ թաթերը հանելու վանդակի այդ ճեղքվածքներից կամ անցքերից: Հիմնականում մետաղալարերի ցանցից

պատրաստված վանդակներն անհարմար են օդային ուղիներով միջազգային տեղափոխությունների համար: Փայտե վանդակները կարող են բավականաչափ ամուր չլինել խոշոր շների համար:

40. Նոր տեղամաս տեղափոխվելուց հետո շներին անհրաժեշտ է վերականգնման համար առնվազն 2 օր ժամանակ հատկացնել՝ նոր միջավայրին հարմարվելու հնարավորություն տալու համար: Հաճախակի տեղափոխվող շները կարող են վերականգնման ավելի կարճ ժամանակ պահանջել, քան այն շները, որոնք ավելի հազվադեպ են տեղափոխվում:

13. ՎԱՐԱԿԻՉ ԵՎ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

41. Բազմաթիվ հիվանդություններ վարակիչ են, իսկ դրանց մի մասը՝ համաճարակային ներուժով: Առավել տարածված են աղետամոքսային համակարգի և թոքերի ախտահարումով ընթացող վարակիչ հիվանդությունները:

42. Համաճարակային հիվանդությունները տարածվում են բավականին արագ և կանխարգելման միջոցառումներ չձեռնարկելու դեպքում կարող են մի քանի օրերի ընթացքում վնասել բոլոր շներին: Կանխարգելման լավագույն միջոցներն են համապատասխան հիգիենան և պատվաստումները:

43. Եթե չափազանց վարակիչ կամ համաճարակային հիվանդության կասկած է առաջանում, ապա վարակված շունը (շները) պետք է անմիջապես ենթարկվեն կարանտինի՝ հիվանդության տարածումից խուսափելու նպատակով:

44. Եթե աշխատանքների ընթացքում շան մոտ համաճարակային հիվանդության կասկած է առաջանում, ապա տարածքում գտնվող բոլոր շները պետք է ժամանակավորապես դադարեցնեն գործունեությունը և հետազոտվեն՝ հայտնաբերելու համար այն շներին, որոնք կարող են վարակված լինել: Այդ հետազոտության ընթացքում բոլոր շները պետք է տեղակայվեն միմյանցից առանձին և վարժեցվեն առանձին տարածքներում:

45. Եթե շների բուժարանում կամ մեծավանդակում առաջանում է համաճարակային հիվանդության կասկածանք, բոլոր շները պետք է դուրս բերվեն այնտեղից և հետազոտվեն բուժարանից կամ մեծավանդակից դուրս:

46. Բոլոր բուժարանները և մեծավանդակները պետք է ախտահանվեն և բոլոր այն տարածքները, որտեղ եղել են շները, մուտքը պետք է արգելված լինի՝ մինչ չհաստատվի, թե որքան շներ են վարակված այդ հիվանդությամբ:

47. Շները պետք է պահվեն առանձին, մինչ չորոշվեն հիվանդության տարածվածության մակարդակները: Վարակված շունը (շները) պետք է անմիջապես ենթարկվեն կարանտինի:

48. Ականազերծման կազմակերպության պարտականությունն է տեղեկացնել շներ օգտագործող այլ ականազերծող կազմակերպություններին և ԱԳԱՄ-ի համաճարակային հիվանդությունների բոլոր դեպքերի վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՋՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԵԽԱՆԻԿԱԿԱԿԱՆ ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

1. ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՄԵՔԵՆԱՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Ականազերծման գործողությունների ընթացքում ականների հայտնաբերման և հետազոտման աշխատանքներում օգտագործվող մեքենաները կարող են բաշխվել երեք ընդհանուր դասակարգերի՝ ականներ վնասազերծող մեքենասարքավորումներ, հողի նախապատրաստման մեքենաներ և ականների ազդեցությունից պաշտպանված մեքենաներ (ԱԱՊՄ):

2. Ականների վնասազերծման մեքենաներն այն մեքենաներն են, որոնց նպատակն ականառումների պայթեցումը, վերացումը կամ հեռացումն է: Նրանց օգտագործման արդյունքն այն է լինում, որ մեխանիկական վնասազերծմանը հետևող հետագա մաքրման անհրաժեշտությունը հասցվում է նվազագույնի, կամ որոշ դեպքերում առհասարակ վերացվում է: Դրանք այն դեպքերն են, երբ ակնկալվող վտանգն իրականում գոյություն չի ունեցել, երբ մեքենաները հեռացրել են վտանգը կամ, երբ մնացած վտանգները ներկայացնում են տանելի մնացորդային ռիսկ:

3. Հողի նախապատրաստման մեքենաները հիմնականում նախատեսված են խոչընդոտների նվազեցման կամ վերացման միջոցով ականազերծման գործողությունների արդյունավետությունը բարելավելու համար:

4. Հողի նախապատրաստման առաջադրանքները կարող են ներառել՝

1) բուսականության կտրումը և մաքրումը.

2) թաքնված լարերի հեռացումը.

3) հողի փխրեցումը.

4) մետաղական աղտոտումների հեռացումը.

5) շինությունների բեկորների, գետաքարերի, լարերից պատրաստված պաշտպանիչ խոչընդոտների հեռացումը.

6) հողի և բեկորների մաղումը:

5. Հողի նախապատրաստման աշխատանքները կարող են ներառել կամ չներառել ականառումների պայթեցումը, վերացումը կամ հեռացումը:

2. ԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԻՑ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

6. Ականների ազդեցությունից պաշտպանված մեքենաները (ԱԱՊՄ) այն ավտոմեքենաներն են, որոնք հատուկ նախագծված են անձնակազմին և սարքավորումներն ականների պայթյունների ազդեցությունից պաշտպանելու նպատակով:

7. ԱԱՊՄ-ները սովորաբար օգտագործվում են հայտնաբերման և հետազոտման աշխատանքներում, և դրանք կարող են իրենց վրա ունենալ այնպիսի սարքավորումներ, ինչպիսիք են հայտնաբերող սարքերը, գոլորշիների սնույնների հավաքման սարքերը կամ, որոշ դեպքերում նաև, հրող կամ քաշող գլանը: Քանի որ այս գործողությունները «մեքենաներ» և «մեխանիկական գործիքներ» ներառող լիովին մեխանիկական ականազերծման գործողություններ չեն, ԱԱՊՄ-ների կողմից իրականացվող աշխատանքի մի մասը դասվում է մեխանիկական ականազերծում դասակարգի մեջ: Օրինակ՝

1) ծանր ԱԱՊՄ-ները, որոնք օգտագործում են իրենց անիվների հետքերը ձեռքով սնույններ հավաքող թիմերի համար անցուղիներ ստեղծելու նպատակով (հողի նախապատրաստման դեր), և

2) գլաններ քաշող կամ հրող ԱԱՊՄ-ներ (ականների մեխանիկական մաքրում):

8. Ականազերծման գործողությունների ընթացքում օգտագործվելիս ԱԱՊՄ-ների նկատմամբ պահանջները նույնն են, ինչ մեխանիկական ականազերծմանը ներկայացվող պահանջները: Համապատասխանաբար, սույն չափորոշչի պահանջները պետք է հավասարապես կիրառվեն ԱԱՊՄ-ների կիրառմանն ինչպես հայտնաբերման, այնպես էլ հետազոտման աշխատանքների ընթացքում:

3. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

9. Երբ մեքենաներն օգտագործվում են ականների վնասազերծման նպատակով և համարվում է, որ մեքենան կարող է թողնել պոտենցիալ վտանգներ, որոնք անընդունելի ռիսկեր են ներկայացնում հողի վերջնական օգտագործողների համար, այս դեպքում հետագա ականազերծման գործողություններ պետք է իրականացվեն նախքան տարածքի

մաքուր համարվելը: Երբ մեքենաներն օգտագործվում են հողի նախապատրաստման համար, նրանց միշտ պետք է հետևեն ականագերծման այլ գործողություններ իրականացնողները, ինչպիսիք են ձեռքով ականագերծում իրականացնող թիմերը, ականներ հայտնաբերող շները (ԱՀՇ) կամ ականների մեխանիկական վնասագերծման թիմերը:

10. Երբ մեքենաներն օգտագործվում են ականների հայտնաբերման և հետազոտման միջոցառումների համար, անհրաժեշտ է հետևել նրանց կողմից տրամադրված տեղեկատվությանը և այն ընդունել որպես պատշաճ և տեղեկատվության կառավարման գործընթացի միջոցով սահմանված, որն իր հերթին կտանի դեպի տարածքի մաքրման վերաբերյալ որոշման ընդունմանը, տարածքի նշագծմանը և տարածքը որպես ոչ վտանգավոր դասակարգելուն:

4. ՏԱՐԱԾՔԻ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՓՈՔՐԱՑՈՒՄԸ

11. Տարածքի մեխանիկական փոքրացում կարող է լինել կամ տեխնիկական հետազոտության մի մասը, կամ էլ վնասագերծման գործընթացի մի մասը: Տարածքի մեխանիկական փոքրացումը ներառում է այն մեքենասարքավորումները, որոնք օգտագործվում են վտանգավոր տարածքում ականառումների և (կամ) ՊՊՄ-ների առկայությունը կամ բացակայությունը ցույց տալու կամ հաստատելու նպատակով: Նպատակն է հնարավորություն տալ ականագերծման այլ սարքավորումները գործարկելու միայն այն տարածքներում, որտեղ հստակեցվել է ականառումների (ՊՊՄ-ների) առկայությունը:

12. Տարածքի մեխանիկական փոքրացման աշխատանքների շրջանակը և մակարդակը կախված են այնպիսի գործոններից, ինչպիսիք են առկա տեղեկատվության ճշտությունը և ամբողջականությունը, շրջակայքը, բուսականությունը, մեքենասարքավորումների և գործիքների տեսակները, ականների և ՊՊՄ-ների տեսակները և տարածքի փոքրացման համար կիրառվող ընթացակարգերը:

13. Ընդհանուր առմամբ, որքան քիչ տեղեկատվություն է առկա վտանգավոր տարածքի վերաբերյալ, այդքան ավելի խորը հետազոտություններ է անհրաժեշտ իրականացնել մեքենասարքավորումների միջոցով՝ հաստատելու համար ականառումների տեղակայման վայրերը և համապատասխանաբար փոքրացնելու համար վտանգավոր տարածքի մակերեսը:

5. ԱՅԼ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

14. Մեքենասարքավորումները կարող են օգտագործվել նաև այլ նպատակներով՝ օժանդակելով ականազերծման աշխատանքներին: Նման գործառույթները կարող են ներառել անցուղիների ստեղծումը, որոնք հնարավորություն կտան մուտք գործելու վտանգավոր տարածքներ ականազերծման աշխատանքներ իրականացնելու նպատակով, մեծ խորության վրա փնտրման համար հողահանման իրականացումը և բեկորների (ավերակների) հեռացումը, որոնք կապահովեն կասկածելի տարածքների հասանելիությունը (օր.՝ ավերված շենքերի տակ մնացած մասերը):

6. ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

15. Գոյություն ունի մեխանիկական ականազերծման մեջ օգտագործվող մեքենասարքավորումների և գործիքների մեծ բազմազանություն, սակայն մեքենասարքավորումներն առանձին հազվադեպ են կարողանում վերացնել բոլոր տեսակի ականները և քիչ է հավանականությունը, որ կարող են պայթեցնել բոլոր ՊՊՄ-ները:

16. Այս հանգամանքը բերել է մեխանիկական ականազերծման նկատմամբ «համակարգային մոտեցումների» անհրաժեշտությանը, որի դեպքում գործիքների ամբողջություն ունեցող մեքենասարքավորումը կամ տարբեր գործիքներ ունեցող մի շարք մեքենասարքավորումներ կիրառվում են ականազերծման գործընթացի տարբեր փուլերում հնարավորինս նվազեցնելու համար գոյություն ունեցող վտանգը: Ինչպես հողի նախապատրաստման, այնպես էլ ականների վնասազերծման մեքենաները, կարող են օգտագործվել համակարգային մոտեցման ընթացքում: Համակարգային մոտեցումը վերաբերում է մեխանիկական ականազերծմանը, որն ինտեգրվում է ականազերծման այլ միջոցների հետ (ձեռքով կամ ԱՀՇ-ի միջոցով իրականացվող)՝ երաշխավորելու համար առավել արդյունավետ արդյունքների ապահովումը:

17. Ստորև ներկայացված է համակարգային մոտեցման մեջ ներառված քայլերի օրինակը, որը տանում է դեպի վտանգավոր տարածքներում աշխատանքների իրականացման պատշաճ մեթոդի ընտրությունը՝

1) ՔԱՅԼ 1. Սահմանել, թե ինչ արդյունքների է կարող հասնել մեխանիկական ականազերծման համակարգը, երբ այն կիրառվում է վտանգավոր տարածքներում գտնվելու հավանականություն ունեցող ականառումների և ՊՊՄ-ների նկատմամբ:

2) ՔԱՅԼ 2. Սահմանել, թե ինչին չի կարող հասնել մեխանիկական ականազերծման համակարգը, երբ այն կիրառվում է վտանգավոր տարածքում առկա լինելու հավանականություն ունեցող ականառումների և ՊՊՄ-ների նկատմամբ: Սա կսահմանի մնացած վտանգները և նրանց կողմից առաջացող մնացորդային ռիսկը:

3) ՔԱՅԼ 3. Սահմանել, թե ինչ հետագա ականազերծման աշխատանքներ են անհրաժեշտ մնացորդային ռիսկը մինչ տանելի մակարդակ նվազեցնելու համար, որոնք առաջացնում են մնացած վտանգները:

7. ՏԱՆԵԼԻ ՌԻՍԿԸ

18. Վերջնական օգտագործողի համար տանելի ռիսկի սահմանումը հանդիսանում է ականազերծման ցանկացած գործողության կարևոր բաղադրիչն է, քանի որ այն ցույց է տալիս, թե որքան խորացված պիտի իրականացվի ականազերծման գործողությունը՝ տանելիության անհրաժեշտ մակարդակին հասնելու համար:

19. Ականների մեխանիկական մաքրումից հետո մնացած վտանգներից առաջացող մնացորդային ռիսկի գնահատումը կարող է ցույց տալ այն, որ ռիսկի մակարդակը դարձել է տանելի, և հետագա ականազերծման գործողություններ անհրաժեշտ չեն:

8. ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԱԿԱՆԱՋԵՐԾՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

20. Ականազերծման գործողությունների ընթացքում օգտագործվող մեքենասարքավորումները պետք է համապատասխանեն հետևյալ ընդհանուր պահանջներին՝

1) յուրաքանչյուր մեքենասարքավորում պետք է փորձարկվի և գնահատվի (ՓևԳ)՝ սահմանելու համար այն պայմաններում առաջադրանքի (առաջադրանքների) կատարման համար նրա համապատասխանությունը, որոնցում այն պետք է աշխատի:

2) յուրաքանչյուր մեքենասարքավորման աշխատանք պետք է գնահատվի և հաստատվի նրա անվտանգությունն օպերատորի և աշխատանքային տեղամասում գտնվող ցանկացած այլ անձի համար: Մեքենասարքավորումների պաշտպանվածության մակարդակը պետք է սահմանվի ռիսկի գնահատման միջոցով:

3) յուրաքանչյուր մեքենասարքավորման համար պետք է մշակվեն Գործունեության ստանդարտ ընթացակարգեր (ԳՍԸ-ներ): ԳՍԸ-ները պետք է ներառեն մեխանիկական

գործունեության ընդհանուր ընթացակարգերը, մեքենասարքավորման համար յուրահատուկ ընթացակարգերը և, անհրաժեշտության դեպքում, այլ մեքենասարքավորումների կամ ականազերծման աշխատանքների հետ տվյալ մեքենայի ինտեգրման ընթացակարգերը: Մեքենասարքավորման գործառնական հավաստագրումը պետք է նաև մասամբ հիմնված լինի սույն չափորոշիչի տվյալ կետի պահանջների բավարարման վրա:

21. Մեքենասարքավորումները չպետք է օգտագործեն այնպիսի գործիքներ, իրականացնեն այնպիսի առաջադրանքներ կամ աշխատեն այն պայմաններում, որոնց համար չունեն համապատասխան գործառնական հավաստագրում:

22. Ականազերծման ծրագրում ցանկացած մեքենասարքավորում օգտագործելուց առաջ պետք է իրականացվի ներպետական ենթակառուցվածքի և օժանդակ համակարգերի գնահատումը՝ ապահովելու համար մեքենայի գործառնական պահպանման հնարավորությունն այն տարածքներում, որտեղ պետք է օգտագործվի այդ մեքենան:

9. ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

23. Մեքենասարքավորման փորձարկումը և գնահատումն (ՓևԳ) իրականացվում են ապահովելու համար այն, որ մեքենասարքավորումը համապատասխանում է իր նպատակային օգտագործմանն այն տարածքում, որտեղ դա պետք է կիրառվի:

24. Մեքենասարքավորումների ՓևԳ-ն պետք է մշակված լինի այնպես, որ հնարավոր լինի՝

- 1) սահմանել մեքենասարքավորման գործառնական սահմանափակումները.
- 2) սահմանել աշխատանքի իրականացման նախատեսվող միջավայրում մեքենասարքավորման գործունեության օպտիմալ պայմանները.
- 3) ականների վնասազերծման մեքենասարքավորումների համար, սահմանել աշխատանքների իրականացման տարբեր միջավայրերում գտնվող վտանգավոր տարածքներից տարբեր տեսակի ականատուրքերի կամ ՊՊՄ-ների վերացման, վնասազերծման, պայթեցման կամ այլապես հեռացման արդյունավետությունը: Սա պետք է դիտարկվի միայն այն ականատուրքերի կամ ՊՊՄ-ների համար, որոնց վերացման համար է նախագծված տվյալ մեքենասարքավորումը՝ համաձայն տեխնիկական հատկորոշումների.

4) ականների վնասազերծման առանձին մեքենասարքավորումների համար կամ մի շարք մեքենասարքավորումների կամ գործիքների համար, որոնք պետք է օգտագործվեն որպես համակարգային մոտեցման մի մաս, սահմանել յուրաքանչյուր տեսակի ականից

կամ ՊՊՄ-ից մնացած մնացորդային ռիսկը, որոնց պետք է ուղղված լինի մեքենասարքավորման կիրառմամբ իրականացվող ականագերծման գործողությունը.

5) սահմանել մեքենասարքավորման օգտագործման մեջ ցանկացած սահմանափակումներ (օր.՝ շրջակա միջավայրի պայմանները, ինչպիսիք են թեքությունը, թաց հողը, ամուր հողը, ջերմաստիճանները և այլն կամ որոշակի պայթուցիկ նյութեր).

6) գնահատել և հաստատել մեքենասարքավորման անվտանգությունն օպերատորի կամ մեխանիկական ականագերծման տեղամասում գտնվող ցանկացած այլ անձի համար, և

7) սահմանել գործառնական ընթացակարգերը, որոնք պահանջվում են երաշխավորելու համար այն, որ մեքենասարքավորումը կարող է բավարարել սահմանված չափորոշիչներին.

8) սահմանել շրջակա միջավայրի ցանկացած պոտենցիալ վնասը, որը կարող է պատճառված լինել ականագերծման մեքենասարքավորումների օգտագործմամբ, օր.՝ հողի էրոզիա:

25. Այն դեպքերում, երբ մեքենասարքավորումն անցնում է ՓնԳ-ն կամ այլ համեմատելի տեղամասերում երաշխավորվում է նրա արդյունավետությունը, կարող է անհրաժեշտ չլինել լրացուցիչ պաշտոնական ՓնԳ: Սա պետք է միայն թույլատրվի այն դեպքերում, երբ հետաքրքրված ականագերծող կազմակերպության կողմից իրականացվում է կատարողականի շարունակական վերահսկում և, երբ մեքենասարքավորման գործառնական ընթացակարգերն այնպիսին են, որ ԱԳԱՄ-ն համոզված է, որ մեքենասարքավորման և հետագա ցանկացած ականագերծման գործողության համար սահմանված ստանդարտները բավարարված կլինեն:

26. Երբ իրականացվում է գործառնական միջոցառումների նման վերահսկում, ականագերծող կազմակերպության կողմից պետք է կազմվեն համապատասխան փաստաթղթեր: Փաստաթղթերը պետք է լինեն բավարար՝ հիմնավորելու համար մեքենասարքավորման գործառնական ընթացակարգերում կատարվող յուրաքանչյուր փոփոխություն:

10. ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ ՄԵՔԵՆԱՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍԱՀ 15044:2004

27. Ստանդարտացման եվրոպական կոմիտեն (ՄԵԿ) մշակել է ՄԵԿ-ի աշխատաժողովի համաձայնագիրը (ՍԱՀ) ականագերծող մեքենասարքավորումների ՓնԳ-ի վերաբերյալ (ՍԱՀ 15044:2004): Այս ՍԱՀ-ը ստանդարտացված մեթոդաբանություն է ներկայացնում

ականազերծող մեքենասարքավորումների ՓԳ-ի համար: Այն տեխնիկական չափանիշներ է տրամադրում հետևյալ նպատակներով՝

1) գործունեության փորձարկում. փորձարկում, որի արդյունքում կսահմանվի, թե արդյոք մեքենասարքավորումը և նրա գործիքը (գործիքները) կարող է (են) համեմատելի և կրկնվող պայմաններում իրականացնել այն գործունեությունը, որի համար նախատեսված են, և կգնահատվեն արտադրողի ներկայացրած հատկորոշումները.

2) դիմադրողականության փորձարկում. փորձարկում, որը հաստատում է, որ մեքենասարքավորումը կարող է դիմակայել պայթյունների հզորությանը, որն օգտագործվում է որպես նախագծման չափանիշ.

3) ընդունելի լինելու փորձարկում. փորձարկում, որի նպատակն է ապահովել, որ մեքենասարքավորումը կարող է աշխատել իր համար նախատեսված միջավայրում:

ՄԱՀ-ը սահմանում է նաև փորձարկման թիրախների նկատմամբ պահանջները, որոնք պետք է օգտագործվեն գործունեության և ընդունելի լինելու փորձարկումների ժամանակ:

11. ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

28. ԱԳԱՄ-ը պետք է ականազերծման կազմակերպություններից պահանջի վարել մանրամասն գրանցումներ իրենց մեխանիկական և հետագա գործողությունների վերաբերյալ՝ վիճակագրական տեղեկատվության տվյալների բազա ստեղծելու համար, որը կարող է օգտագործվել գործառնական որոշումների ընդունման համար: Այս տեղեկատվությունը կարող է, օրինակ, թույլ տալ ԱԳԱՄ-ին մեխանիկական վնասազերծումից հետո, առանց հետագա միջոցառումներ իրականացնելու, օգտագործման հանձնել հողատարածքը, եթե վիճակագրական տվյալները պատշաճ կերպով վկայում են այն մասին, որ մնացած վտանգների կողմից ներկայացվող մնացորդային ռիսկը տանելի ռիսկ է:

29. Գործառնական կատարողական ցուցանիշների մասին հաշվետվությունները, ինչպիսիք են աշխատած ժամերի թիվը, մաքրված տարածքը և հայտնաբերված ականներն ու ՊՊՄ-ները, կարևոր է պատշաճ վիճակագրական գրանցումներ վարելու համար:

30. Ոչ աշխատանքային ժամերի մասին հաշվետվությունները, ինչպիսիք են խափանումները, տեղամասերի միջև տեղափոխությունը և նյութատեխնիկական խնդիր-ների հետևանքով առաջացած հետաձգումները, կարող են օգնել հասկանալ գործառնական խնդիրները և (կամ) տեսանելի դարձնել կոնկրետ մեքենասարքավորումների գործու-

նեության տենդենցները, որոնք կարող են զգալիորեն օգնել կազմակերպություններին բարելավել իրենց մեխանիկական գործողությունների արդյունավետությունը:

12. ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

31. Ականազերծող կազմակերպությունները մեխանիկական գործողությունների համար մշակված գործառնական ընթացակարգերում պետք է ապահովեն հետևյալ թեմաների ներառումը:

32. **Ընդհանուր:** Մեքենասարքավորումներն օգտագործվում են միայն իրենց գործառնական հավաստագրման շրջանակներում, ինչպես սահմանված է ՓնԳ-ի ընթացքում և փաստաթղթավորված է ԳՍԸ-ներում: Ականազերծման հետագա աշխատանքները պլանավորելիս անհրաժեշտ է հաշվի առնել հողի ծավալի ընդլայնումը (մեխանիկական մշակման արդյունքում հողի ծավալի ավելացումը): Մշակման խորությունը պետք է կապվի հողի նախնական չխափանված մակերեսի հետ:

33. **Ականառումբեր, ՊՊՄ-ներ և այլ վտանգներ:** Եթե գործողությունների ընթացքում հայտնաբերվում է այնպիսի վտանգ, որի վերացման ուղղությամբ տվյալ մեքենասարքավորումը նախագծված չէ կամ չունի համապատասխան թույլտվություն, մեխանիկական գործողությունը պետք է դադարեցվի, և պետք է իրականացվի առաջադրանքի վերանայում: Վտանգավոր տարածքներից դեպի անվտանգ տարածներ անցնելուց առաջ մեքենասարքավորումները պետք է ստուգվեն՝ ապահովելու համար այն, որ ոչ մի սկանառումբ, ՊՊՄ կամ այլ վտանգավոր բաղադրիչ չի մնացել մեքենասարքավորման աշխատանքային կամ շարժական մասերում, կամ էլ՝ չի կպել նրան:

34. **Մեխանիկական ականազերծման գործողությունների կառավարում:** Մեխանիկական ականազերծման գործողությունների կառավարումը պետք է իրականացվի այնպես, որ հնարավոր լինի ապահովել գործողությունների պատշաճ վերահսկումը և տրամադրել անհետաձգելի օգնություն՝ դժբախտ պատահարներին արձագանքելու և սարքավորումները վերականգնելու ծրագրերին համաձայն:

35. **Բժշկական:** Ականազերծման ընթացքում արձագանքման ծրագրերը ներկայացված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի N 454-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչներով: Բացի դրանից՝ բժշկական գործողությունների վերաբերյալ դժբախտ պատահարներին արձագանքելու ծրագրերը, որոնք ներառում են անձնակազմ ունեցող մեքենաներ, պետք է ունենան համապատասխան ընթացակարգեր տուժած անձանց մեքենաներից դուրս բերելու վերաբերյալ:

36. **Հաղորդակցում:** Տեղամասը վերահսկող անձի և մեխանիկական օպերատորի միջև հաղորդակցումը պետք է անխափան կերպով իրականացվի այն ժամանակ, երբ մեքենան աշխատում է վտանգավոր տարածքում:

37. **Աշխատակազմի նկատմամբ պահանջներ:** Մեխանիկական ականագերծման աշխատանքային տեղամասերը պետք է գործողությունների իրականացման ընթացքում տեղերում ունենան պատշաճ որակավորում ունեցող անձնակազմ, ապահովելու համար՝

1) գործողությունների ստանդարտները.

2) անհրաժեշտության դեպքում՝ այլ ականագերծման գործողությունների հետ արդյունավետ ինտեգրումը.

3) անհետաձգելի իրավիճակներում անհրաժեշտ օգնության տրամադրումը:

38. **Մեքենասարքավորումների պահպանում և սպասարկում:** Մեքենասարքավորումների պահպանման և սպասարկման չափորոշիչներն են՝

1) մեքենաները պահպանվեն և սպասարկվեն արտադրողի առաջարկություններին համապատասխան.

2) պահպանումը և սպասարկումն իրականացվեն համապատասխան մասնագետների կողմից.

3) անցկացվեն մեքենաների աշխատող բաղադրիչների պարբերական ստուգումները, իսկ մեքենաների արդյունավետ աշխատանքի համար էական նշանակություն ունեցող բաղադրիչների վնասվելու կամ կորելու դեպքում այդ բաղադրիչները պետք է վերանորոգվեն կամ փոխարինվեն՝ նախքան աշխատանքի շարունակումը.

4) իրականացվեն մեքենաների անվտանգության ապահովման միջոցների պարբերական ստուգումները, և վնասվածքների հայտնաբերման դեպքում այդ վնասվածքը վերանորոգվի՝ նախքան հետագա աշխատանքի իրականացումը, և

5) այն դեպքում, երբ մեքենան կարող է պայթյունի ենթարկվել, ինչը կարող է ազդեցություն ունենալ աշխատանքների անվտանգության վրա, մեքենան պետք է անմիջապես դուրս բերվի վտանգավոր տարածքից և ստուգվի: Եթե մեքենայի վնասվածքը կարող է վտանգի ենթարկել անձնակազմին հետագա պայթյունների դեպքում, մեքենան չպետք է գործարկվի մինչ վնասվածքի վերանորոգումը: Մեքենաների լավ պահպանման առանցքային բաղադրիչն է մեքենաների գործարկման եղանակը: Մեխանիկական օպերատորները պետք է որակավորված և փորձառու լինեն իրենց մեքենաների գործարկման և պահպանման մեջ:

39. **Հետքերման պահանջներ:** Մեխանիկական ականագերծման գործառնական ընթացակարգերը պետք է դրույթներ ներառեն վտանգավոր տարածքներում մեքենայի կանգ առնելու դեպքում մեքենայի և օպերատորի հետքերման վերաբերյալ: Նման

ընթացակարգերը պետք է ապահովեն հնարավորինս շուտ օպերատորի անվտանգ հետքերումը և խելամիտ ժամկետներում մեքենայի անվտանգ վերանորոգումը:

40. Հակահրդեհային նախագոյազուցումներ և փորձարկումներ: Մեքենաներ օգտագործող ակննագերծող կազմակերպությունները պետք է ընթացակարգեր մշակեն վտանգավոր տարածքներից օպերատորի անվտանգ հետքերման դեպքերի համար: Այս ընթացակարգերը պետք է ներառեն անհապաղ գործողություններ և ապահովեն վտանգավոր տարածքից օպերատորի անվտանգ դուրսերումը: Այն մեքենաներում, որոնցում առկա են օպերատորներ, պետք է տեղակայված լինեն կրակմարիչներ կամ կրակը ճնշող համակարգեր: Ոչ մի պարագայում որևիցե անձի չպետք է թույլատրվի մուտք գործել չվնասազերծված տարածք՝ այրվող մեքենայի կրակը մարելու նպատակով: Հակահրդեհային սարքավորումները պետք է առկա լինեն բոլոր այն վայրերում, որտեղ իրականացվում է մեքենայի՝ վառելիքով վերալիցքավորումը:

41. Շրջակա միջավայրի դիտարկումներ: Այն հողատարածքը, որի վրա իրականացվում են մեխանիկական գործողությունները, պետք է բերվի այն վիճակի, որի պայմաններում հողատարածքը համապատասխանում է հանձնումից հետո իր նպատակային օգտագործմանը: Այն դեպքերում, երբ մեխանիկական գործողությունները ներառում են բուսականության հեռացումը, կամ իրականացվում են այն հողատարածքների վրա, որոնք ենթարկվում են էրոզիայի, ակննագերծող կազմակերպությունները պետք է ապահովեն նման էրոզիայի նվազեցման միջոցառումների ձեռնարկումը: Ակննագերծող մեքենաների գործարկումը, վերանորոգումը, պահպանումը և սպասարկումը պետք է իրականացվեն շրջակա միջավայրի տեսանկյունից ընդունելի կերպով, օր.՝ կանխարգելելով հողի կամ գետերի՝ վառելիքով, յուղով կամ քսայուղերով աղտոտումը:

42. Սեփականության և ենթահամակարգի պաշտպանություն: Մեխանիկական գործողությունների պլանավորման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել սեփականության կամ ենթահամակարգի բոլոր հնարավոր վնասները: Այն դեպքերում, երբ հնարավոր է սեփականության կամ ենթահամակարգի վնասումը, սեփականության սեփականատերերը կամ տեղական իշխանությունները պետք է դրա մասին տեղեկացվեն նախքան գործողությունների մեկնարկը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ ՏԵՂԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

1. Սույն չափորոշիչը սահմանում է ականագերծման անվտանգ աշխատավայր ստեղծելու և պահպանելու նպատակով քաղաքականության և ամրագրված ընթացակարգերի ու պրակտիկայի մշակման և իրականացման նկարագրերն ու ուղղությունները:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

2. Աշխատանքային ապահով միջավայրի ապահովումը ներառում է ականագերծման կայանի նախագծում և ձևավորում արգելափակելով և նշելով վտանգավոր տարածքները, վերահսկելով ականագերծողների, այցելուների և հասարակության շարժը, հաստատելով և կիրառելով աշխատանքային տարածքներ և տրամադրելով բժշկական արդյունավետ ապահովագրություն: Սա պահանջում է, որպեսզի ԱԳԱՄ-ը և ականագերծմամբ զբաղվող կազմակերպությունները մշակեն և իրականացնեն տեղանքի անվտանգության համապատասխան քաղաքականություն և ընթացակարգեր:

2. ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ ՏԵՂԱՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

3. Ականագերծման տեղանքը պետք է այնպես նախագծված լինի, որ՝

1) ապահովվի վտանգավոր տարածքների (այդ թվում՝ ֆուգասային վտանգի տարածքները), մաքրված և օգտագործվող տարածքների հստակ տեսանելի տարանջատումը.

2) ապահովվի, որպեսզի առանձին ականագերծողների, մեքենաների կամ ականներ հայտնաբերող շների (ԱՀՇ) և ականագերծման տարածքում գտնվող այլ աշխատողների միջև պահպանվի աշխատանքային հաստատված տարածություն.

3) վերահսկվի ականագերծման տարածքի աշխատակազմի և այցելուների շարժը (այդ թվում՝ հանրության ներկայացուցիչների) տարածքում.

4) վերահսկվի ականագերծող սարքերի և մեքենաների շարժը.

5) սահմանափակվի վտանգի գոտիներ մուտք ունեցող ականագերծման տեղանքի աշխատողների և այցելուների թիվը.

6) ձեռնարկվեն նախազգուշական միջոցառումներ՝ ականների և պատերազմից պահպանված պայթուցիկ մնացորդների վերահսկվող վնասազերծման ժամանակ ականազերծման տարածքի աշխատողներին, այցելուներին և տեղական բնակչության անդամների մուտքը պայթյունավտնագ տարածքներ թույլ չտալու համար կամ շենքերում, բունկերներում կամ շարժական կառույցներում ապահովի համապատասխան պաշտպանություն:

7) ներառի միջոցառումներ՝ կառուցվածքային ու էկոլոգիական վնասը կանխելու համար:

4. Սույն չափորոշիչների համատեքստում վտանգի գոտին այն անմիջական տարածքն է, որտեղ ակնկալվում է պայթյունի վտանգ, իսկ վտանգավոր գոտին, կոնկրետ վտանգի համար, այն գոտին է, որտեղ ակնկալվող վտանգի պայթյունի բեկորները կարող են վնասվածք հասցնել: Վտանգավոր գոտին ավելի մեծ է, քան վտանգի գոտին՝ կոնկրետ վտանգի համար:

3. ՎՏԱՆԳԻ ԳՈՏՈՒ ՆՇԱԳԾՈՒՄԸ

5. Տեղանքում ապահով և վտանգավոր գոտիները պետք է առանձնացված լինեն՝ հստակ և համապատասխան նշագծման միջոցով:

6. Ականազերծման աշխատանքային տարածությունները սովորաբար վերաբերում են անվտանգության տարածություններին:

7. Ականազերծման ժամանակ ամենամեծ ռիսկի ենթարկվում են ականազերծողները, ովքեր, անհրաժեշտությունից ելնելով, առավել մոտ են գտնվում վտանգին: Աշխատանքային տեղանքում գտնվող մյուս աշխատողների համար ռիսկն ավելի փոքր է:

8. Աշխատանքային տեղանքում գտնվող մյուս անձանց համար վնասվելու ռիսկը տանելիության ստիճանի հասցնելու համար ականազերծող կազմակերպությունները պետք է առանձին ականազերծողների, մեքենաների կամ ԱՀՇ-ների ու ականազերծման տեղանքում գտնվող այլ աշխատակազմի միջև սահմանեն աշխատանքային տարածություններ:

9. Աշխատանքային տարածությունները պետք է սահմանվեն ռիսկերի մանրակրկիտ ու փաստաթղթավորված գնահատման հիման վրա՝ հաշվի առնելով տեղանքի հետ կապված վտանգները, տեղանքի տոպոգրաֆիան և սարքավորումների միջոցով աշխատակազմի համար ապահովվող պաշտպանությունը: Ոչ ավտոմատացված ականազերծման ժամանակ կիրառվելիք աշխատանքային համապատասխան տարածությունները որոշելու համար ռիսկերի մանրակրկիտ գնահատման կարգը սահմանում է ԱԳԱՄ-ը:

10. Ոչ ավտոմատացված ականագերծման համար համապատասխան աշխատանքային տարածությունները սահմանելու սկզբունքները կարող են նաև կիրառվել ԱՀՇ-ի կամ մեքենաների միջև համապատասխան տարածությունները սահմանելու ժամանակ:

4. ՎՏԱՆԳԱՎՈՐ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ

11. Վտանգավոր տարածքի շրջագծի սահմանները պետք է հաշվի առնեն աշխատանքային տեղանքում ականների (ՊՊՄ-ների) հնարավոր պայթյունի բեկորային վտանգի շրջագիծը: Վտանգավոր տարածքի չափը պետք է սկզբնապես չափվի վտանգավոր տարածքի հայտնի եզրագծերից, սակայն սահմանները կարող են տեղաշարժվել ականագերծման գործողություններին և ականների (ՊՊՄ-ների) գտնվելու փաստացի վայրերը պարզելուն զուգընթաց:

12. Մուտքի վերահսկումը վտանգավոր տարածքներ: Ականագերծումը, հաճախ պարզվում է, որ գրավիչ միջոցառում է տեղական բնակչության, հատկապես, երեխաների համար: Պետք է միջոցառումներ մշակվեն՝ չարտոնված անձանց մուտքը վտանգի տարածքներ, ականագերծման տեղանք և վտանգավոր տարածքներ վերահսկելու համար:

13. Դրանց պետք է հասնել հետևյալ կերպ՝

1) տեղեկացնել տեղի բնակչությանը, ականագերծողներին և ականագերծման տեղանք այցելողներին տեղանքի, վտանգի տարածքների և վտանգավոր տարածքների չափերի մասին.

2) ֆիզիկապես վերահսկել մուտքը վտանգավոր տարածքներ ականների կամ ՊՊՄ-ների վնասագերծման ընթացքում՝ նախագգուշացնող ազդանշանների և վերահսկողների միջոցով.

3) նշագծելով վտանգավոր և վտանգի գոտիները:

14. Նախագգուշացման համակարգերը պետք է ներառեն հետևյալը՝

1) նախագգուշացման ազդանշաններ դեպի տեղանք բերող ուղիների (ճանապարհներ, արահետներ կամ կաճաններ) վրա, որոնք տեղեկացնում են մարդկանց, որ իրենք մտնում են վտանգի կամ վտանգավոր գոտի: Ազդանշանները պետք է ներառեն տեղեկություններ վտանգի բնույթի մասին և տարածքի չափերի մասին: Ազդանշանները պետք է նաև հիշեցնեն ականագերծող աշխատակազմին վտանգավոր գոտում գտնվելու ընթացքում անձնական պաշտպանության սարքավորումներ կրելու անհրաժեշտության մասին.

2) ճեպագրույցների կամ ազդանշանների կամ տեղեկատվական թերթիկների միջոցով ականագերծման տեղանքին մոտ ապրող կամ աշխատող մարդկանց և տեղի իշխանությունների համար ռիսկի նվազեցման իրազեկում: Ճեպագրույցները և (կամ)

տեղեկատվական թերթիկները ներառում են տեղեկություններ ձայնաագրանշանային մեթոդների մասին, որոնք օգտագործվում են աշխատողներին և տեղի բնակչությանը ականների կամ ՊՊՄ-ների պայթեցման մասին տեղեկացնելու համար.

3) ռիսկերի նվազեցման մասին իրազեկումը, ադ թվում՝ տեղանքի վտանգները և վտանգավոր գոտի մուտքը վերահսկելու համար նշանակված ականազերծողների ցուցումներն անտեսելու հետևանքները.

4) ամրագրված չափորոշիչները և ստանդարտ գործառնական ընթացակարգերը պետք է ներառեն վերահսկողների կիրառում՝ վտանգավոր գոտի մուտքը վերահսկելու համար, նախագրուշացման ագրանշաններ և ձայնային ագրանշաններ, որոնք պետք է օգտագործվեն պայթեցման գործընթացի ժամանակ:

15. Ականազերծման գործառնությունների պլանավորման ու իրականացման ընթացքում պետք է նվազագույնի հասցվի տեղի բնակչությանը պատճառված անհանգստությունը, քանի որ այն կարող է վտանգավոր գոտով տեղաշարժվելու կարիք ունենա, որպեսզի ապրի և գոյատևի: Իրատեսական չէ ակնկալել, որ մաքրման առաջադրանքի իրականացման ամբողջ ընթացքում հանրությանը կարելի է հետ պահել ականազերծման ամբողջ տեղանքի վտանգավոր գոտիներ մտնելուց:

16. Եթե տեղանքի վայրն այնպիսին է, որ գտնվում է հաճախ օգտագործվող ճանապարհի կամ ուղու վրա, ապա պետք է դիտարկվեն հետևյալ միջոցառումները՝ տեղի բնակչության ելքն ու մուտքն ապահովելու համար.

1) եթե տեղանքը բավականաչափ փոքր է, ականազերծողների խումբը պետք է փուլային կարգով իրականացնի աշխատանքները՝ բնակչությանը պատճառված անհանգստությունը նվազագույնի հասցնելու համար.

2) եթե տեղանքը մեծ է, ականազերծող կազմակերպությունը պետք է դիտարկի այլընտրանքային հարմար ուղու ստեղծումը.

3) եթե այլընտրանքային նման ուղի ստեղծել հնարավոր չէ, ականազերծողների խումբը պետք է դիտարկի պաշտպանիչ աշխատանքների իրականացումը:

5. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՎԵՐԱՀՄԿՈՒՄԸ

17. Եթե երթևեկելի ճանապարհը կամ ուղին անցնում է ականազերծման տեղանքի վտանգավոր գոտով, ապա երթևեկության ուղին պետք է տեղափոխվի հայտնի ապահով վայր կամ տարածք մուտք գործելու բոլոր կետերում պետք է տեղադրվեն մարդու կողմից վերահսկվող անցակետեր:

18. Երթևեկության վերահսկման կետերը կարող են ներառել ֆիզիկական արգելափակոցների և ազդանշանների տեղադրում: Երթևեկության անցակետերը վերահսկող անձնակազմը պետք է կապ ունենա ականազերծման տեղանքում ականազերծման աշխատանքների վերահսկիչի հետ:

19. Տեղի իշխանություններին պետք է տեղեկացնել ականազերծման ընթացքում երթևեկության վերահսկման պահանջների մասին և խնդրել նրանց խորհուրդն ու աջակցությունը:

20. Ականազերծման տեղանքի վերահսկիչները պետք է համակարգեր ստեղծեն, որոնք թույլ կտան, որպեսզի ականազերծման գործողությունները շարունակվեն երթևեկելի ճանապարհներին ու ուղիներին մոտ, սակայն, նման համակարգերը չպետք է վտանգեն ականազերծող անձնակազմի և հանրության անվտանգությունը ու պետք է հնարավորինս քիչ անհանգստություն պատճառեն:

6. ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

21. Ականազերծման տեղանքի աշխատողները, ովքեր ականազերծման ժամանակ պետք է մտնեն ականազերծման տեղանքի վտանգավոր գոտիներ, պետք է կրեն անձնական պաշտպանիչ սարքավորումներ (ԱՊՍ)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի N 454 - Ն որոշմամբ հաստատված չափորոշիչների համաձայն: Եթե ականազերծման գործողությունները դադարեցվում են, ապա ականազերծման տեղանքի վերահսկիչի կողմից ԱՊՍ-ի կիրառման պահանջը կարող է մեղմացվել:

7. ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

22. Ականազերծման տեղանքներում, որտեղ գնահատված վտանգները ներառում են էլեկտրական աղբյուրից բռնկվող պայթյուն, պետք է նախազգուշական միջոցառումներ ձեռնարկվեն ՌՀ-ի վտանգների դեմ: Դրանցից են՝

1) ոռոգիչ ունեցող մեքենաները պետք է տարածք մուտք գործեն միայն ոռոգիչն անջատած վիճակում.

2) հեռահաղորդակցության սարքավորումներ կրող աշխատողները պետք է անջատեն հեռահաղորդակցության իրենց սարքերը՝ էլեկտրականությամբ բռնկվող չգործարկված ականներին կամ չհատկորոշված ականներին մոտենալիս:

23. Հեռահաղորդակցության սարքավորումները չպետք է օգտագործվեն ականներ կամ ՊՊՍ-ներ վնասազերծելու համար նախատեսված դետոնատորների մոտակայքում, որոնք բռնկվում են էլեկտրականությունից, եթե, իհարկե, դետոնատորները պահված չեն պայթուցիկներից առանձին, որը կանխում է դրանց բռնկումը:

8. ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ

24. Տեղանքի արդյունավետ վերահսկումը պահանջում է անվտանգության և վարչարարության համար մի շարք տարածքների ձևավորում և հստակ նշագծում: Նման տարածքները պետք է դուրս լինեն մաքրման կամ պայթեցման գործողությունների կամ պայթուցիկների պահեստավորման համապատասխան գոտիներից:

9. ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԻՆ

25. Մեքենաների կայանատեղին պետք է լինի օգտագործված կամ մաքրված տարածք, որը պետք է բավականաչափ մեծ լինի՝ ականազերծողների ու այցելուների մեքենաներն անվտանգ կայանելու համար: Կարող են անհրաժեշտ լինել նաև առանձին տարածքներ՝ մեքենաների բեռնաթափման (բեռնման) համար:

26. Կայանատեղիի սահմանները պետք է հստակ նշված լինեն և ցուցանակներ տեղադրվեն: Կայանատեղիում ամրացված ցուցանակները պետք է ցույց տան ականազերծման տեղանքի և այցելուների հաղորդման վայրերի ուղղությունները: Հնարավորության դեպքում այդ ուղղությունները պետք է ներառեն քարտեզ, որը ցույց է տալիս կայանատեղիի մոտակայքում գտնվող ականների կամ ՊՊՄ-ների վտանգները կամ մեքենաների կայանատեղիից դեպի ականազերծման տարածքի այցելուների հաղորդման վայր տանող ուղին:

10. ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ԵՎ ՃԵՊԱԶՐՈՒՅՑԻ ՎԱՅՐԵՐԸ

27. Այցելուների հաղորդման և ճեպագրույցի վայրերը պետք է հստակ նշված և նկատելի լինեն, որտեղ այցելուները պետք է հաղորդեն ականազերծման տարածք ժամանելու մասին: Ականազերծման տեղանքի այցելուների հետ վարվելու չափորոշիչները սահմանում է ԱԳԱՄ-ը:

28. Ականազերծման տարածքում այցելուներին ցուցադրելու նպատակով պահվող ականները, չգործարկված պայթուցիկները կամ զինամթերքի այլ բաղադրիչները պետք է խստորեն պահպանվեն IMAS 10.50-ի պահանջների համաձայն: Այցելուները պետք է նախազգուշացվեն, որպեսզի որևէ իրի, որ կարող է գետնին ընկած լինել, ձեռք չտան:

11. ՈՒՂՂԱԹԻՌՆԵՐԻ ՎԱՅՐԷՋՔԻ ՏԵՂԱՆՔԸ (ՈՒՎՏ)

29. Այն դեպքերում, երբ վիրավորներին ուղղաթիռով էվակուացնելը հնարավոր է, պետք է, նախքան տարածքում ականազերծման աշխատանքներ սկսելը, ստեղծվի ՈՒՎՏ:

30. ՈՒՎՏ-ի չափը և մոտեցման օդային միջանցքները պետք է սահմանվեն օդով վիրավորներին էվակուացնող ծառայություններ իրականացնող կազմակերպության պահանջների համաձայն:

31. ՈՒՎՏ-ն չպետք է գտնվի հնարավոր վտանգավոր տարածքների հարևանությամբ: Հարկավոր է մտածել նաև օդային միջանցքների և թիակներից առաջացող օդային հոսանքների ու «օտարածին օբյեկտների» ցաքուցրիվ լինելու ռիսկի մասին: Ականազերծման տեղանքի համարը, ՈՒՎՏ-ի կողողինատներն ու նկարագրությունը (ներառյալ նշագծումների նկարագրությունը) պետք է տրամադրվեն վիրավորներին օդով էվակուացման ծառայություն մատուցող կազմակերպությանը:

32. ՈՒՎՏ-ն պետք է նշագծված լինի հեշտ տեսանելի նյութով (նախընտրելի է ֆլուորեսցենտով) և ունենա առնվազն 2 մ x 2 մ չափեր և ամուր ֆիքսված լինի գետնին (վիրավորներին օդով էվակուացնելու ծառայություններ մատուցող կազմակերպությունը պետք է ուղղություն ցույց տա ֆիքսելու եղանակների վերաբերյալ): Այն պետք է նաև հստակ կերպով նշագծված լինի, և բոլոր այն տեղանքները, որոնց այն սպասարկում է, պետք է ցուցանակներ ունենան:

33. Չամրացված բոլոր նյութերը պետք է հեռացվեն տեղանքից և այն շրջագծից, որ կսահմանվի վիրավորներին օդով էվակուացնելու ծառայություններ մատուցող կազմակերպության կողմից: ՈՒՎՏ-ն չպետք է օգտագործվի որպես մեքենաների կայանատեղի կամ վարչական տարածք:

12. ԱՆՎՏԱՆԳ ԱՆՑՈՒՂԻՆԵՐԸ

34. Ականազերծող կազմակերպությունը պետք է ստեղծի անվտանգ անցուղիներ, որոնք, ըստ հաստատված տվյալների զերծ են վտանգներից. դրանցով պետք է ապահովվի մուտքն ականազերծման տեղանք և դրա շրջակայք:

35. Անվտանգ անցուղիները պետք է նշագծվեն և ամրագրվեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Անվտանգ անցուղիները պետք է բավականաչափ լայն լինեն, որպեսզի ապահովեն անձնակազմի և սարքավորումների ապահով տեղափոխումը դեպի տեղանք:

36. Անվտանգ անցուղիները պետք է բավականաչափ լայն լինեն տուժածների էվակուացման համար, որպեսզի ապահով կերպով իրականացվի ականազերծման ժամանակ պատահարների արձագանքման ծրագիրը:

37. Անվտանգ անցուղիների լայնությունը չպետք է լինի 2.0 մետրից պակաս:

13. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

38. Ականազերծման յուրաքանչյուր տեղանք պետք է ունենա առաջին օգնության կետ, որը պետք է կազմակերպված և հագեցած լինի սույն չափորոշիչներով առաջարկված կերպով:

39. Առաջին օգնության կետը պետք է՝

- 1) նկատելի լինի և հստակ նշաններ ունենա.
- 2) հագեցած լինի համապատասխան առաջին օգնության և բժշկական պարագաներով ու սարքերով.
- 3) հարկ եղած դեպքում հրավիրվի համապատասխան որակավորում ու փորձառություն ունեցող բժշկական և միջին բժշկական անձնակազմ.
- 4) տեղակայված լինի մաքրման տեղանք այցելելու համար դյուրամատչելի վայրում և ապահովի շտապ օգնության մեքենաների մուտքը:

14. ՀԱՆԳՍՏԱՎԱՅՐԵՐԸ

40. Աշխատանքային տեղանքը պետք է ունենա նկատելի և համապատասխանաբար նշված հանգստավայրեր: Հանգստավայրերը պետք է տեղակայված լինեն վտանգավոր գոտուց դուրս, եթե ականազերծումը շարունակվում է նաև հանգստի ժամանակ, պետք է այնպես հագեցած լինեն, որ անձնակազմը պաշտպանեն եղանակային անբարենպաստ կամ ծայրահեղ պայմաններից:

15. ՊԱՅԹՈՒԳԻԿՆԵՐԻ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՎԱՅՐԸ

41. Պայթուցիկները կամ ՊՊՄ-ները կարող են պահպանվել ականազերծման տեղանքում: Ականազերծման ընթացքում օգտագործվող պայթուցիկները պետք է պահպանվեն կոնտեյներում, որը հաստատված է պահպանման ենթակա պայթուցիկի այդ տեսակի և քանակի համար:

42. Եթե կոնտեյներային պահեստավորման այս չափորոշի կիրառումը հնարավոր չէ, ակննագերծող կազմակերպությունը պատասխանատու է անվտանգության համա-պատասխան միջոցառումներ (պաշտպանիչ շինություններ, անվտանգության տարածքներ, ֆիզիկական անվտանգություն և այլն) իրականացնել և կիրառել միջավայրային գործոնների ազդեցությունից պաշտպանող միջոցներ՝ պայթուցիկներ արտադրող գործարանի ցուցումների համաձայն: Նման պահեստավորումը պետք է համարվի միայն ժամանակավոր միջոցառում:

16. ՄԻՋԱԴԵՊ ԱԿԱՆԱՋԵՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

43. Պետք է ստեղծվեն և պաշտոնապես ամրագրվեն ակննագերծման ժամանակ միջադեպերին արձագանքելու ընթացակարգեր՝ ԳՍԸ-ներ, որոնք պետք է ներառեն՝

1) ակննագերծման ժամանակ տեղի ունեցած միջադեպերին արձագանքելու համար անհրաժեշտ կազմակերպչական միջոցառումներն ու կարողությունները, այդ թվում՝ ընթացակարգերը, ուսուցումը, սարքավորումներն ու նյութերը.

2) հետաքննության ընթացակարգերը, վերլուծությունը և ուղղիչ գործողությունները, որ պետք է իրականացվեն ակննագերծման ժամանակ տեղի ունեցած միջադեպից հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Վտանգավոր տարածքներում օգտագործման նպատակով նախատեսված անհատական պաշտպանության սարքավորումների (ԱՊՍ) աստիճանները պետք է բխեն մի շարք գործոններից, ինչպես, օրինակ, տեղական ռիսկերը, աշխատանքային ընթացակարգերը և տեղական շրջակա միջավայրի պայմանները:

2. Հարկավոր է ուսուցանել ականազերծող կազմակերպության աշխատողներին նրանց կողմից օգտագործվող ԱՊՍ-ների պատշաճ օգտագործման, պահպանման և պահեստավորման վերաբերյալ: Հարկավոր է տրամադրել տարածքներ սարքավորումների պատշաճ պահեստավորման, տեղափոխման և պահպանման համար:

3. Սարքավորումները պետք է կանոնավոր ստուգել՝ ապահովելու համար դրանց օգտագործման պիտանիությունը:

2. ՀԱՐՎԱԾԻ ԱԼԻՔԻՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

4. ԱՊՍ-ն պետք է կարողանա պաշտպանել 240 գմ տրոտիլի հարվածի ալիքից հետո հար տարածության վրա ԱՊՍ-ի յուրաքանչյուր միավորի համար՝ ըստ ԳՍԸ-ի իրականացրած գործողության: Այսպիսի վտանգի ռիսկից պաշտպանելու համար տրամադրված սարքավորումները պետք է ներառեն առնվազն հետևյալը՝

1) դիմային պաշտպանություն՝ ըստ իրականացվող գործողության, որը կարող է պաշտպանել 240 գմ տրոտիլի հարվածի ալիքից՝ մարմնի առավել մոտ մասերից 30 սմ հեռավորության վրա:

2) աչքերի պաշտպանություն, որը դիմացկուն է 240 գմ տրոտիլի հարվածի ալիքի ուժի նկատմամբ 60 սմ հեռավորության վրա և ապահովում է դեմքի ու կոկորդի ամբողջական ծածկույթ (պաշտպանություն): Այն դիմային պաշտպանության հանդերձանքի մասն է կազմում:

5. Աշխատողներին հատկացված դիմային պաշտպանության հանդերձանքը, անկախ նրանից, թե հարկավոր է ծնկել, նստել թե կքանստել, պետք է նախատեսված լինի այնպես, որ ծածկի աչքերը, կոկորդը (պարանոցի առջևի հատվածը), կրծքավանդակը, որովայնը և սեռական օրգանները:

6. Այն դեպքերում, երբ ԳՍԸ-ն թույլ է տալիս աշխատողին աշխատել ծնկած կամ կքանստած դիրքում, դիմային պաշտպանության հանդերձանքը պետք է ծածկի ազդրերի առջևի հատվածը: ԱՊՍ-ի հանդերձանքի միավորների միջև բաց տեղ չպետք է լինի: Սա հատկապես վերաբերում է երեսակալներին, որոնք տեղադրված են դեմքի ստորին մասում և ծածկում են ԱՊՍ-ների վերին հատվածը, սակայն ուղղահայաց բաց հատված է մնում, որտեղից հարվածի ուժով կարող է բեկոր ներս թափանցել և վնասել դեմքն ու աչքերը:

7. Ձեռքի գործիքները պետք է այնպես կառուցված լինեն, որ հակահետևակային հարվածային ականի պայթյունի արդյունքում դրանց մասնատումը կամ բեկորների վերածումը հասցվի նվազագույնի: Դրանք պետք է օգտագործվեն ձեռքի համապատասխան պաշտպանիչ միջոցների առկայության դեպքում, ինչպես օրինակ ձեռքի վահանակը կամ ձեռնոցը:

8. Ձեռքի գործիքները պետք է այնպես նախագծված լինեն, որ օգտագործվեն գետնից որոշակի ցածր անկյան տակ և պետք է պատշաճ հեռավորություն նախատեսեն պայթյունի կետից:

9. Ռիսկի նվազեցման գործընթացի ժամանակ ականազերծող կազմակերպությունները կարող են դիտարկել պայթյունաանվտանգ կոշիկների տրամադրում ոտքերի և ստորին վերջույթների պաշտպանության համար այն դեպքերում, երբ կա մեծ ռիսկ, որը չի կարող նվազեցվել միայն ԳՍԸ-ով, եթե ապացուցված է, որ այդպիսի պայթյունաանվտանգ կոշիկները համարվում են ռիսկի կրճատման առումով արդյունավետ:

10. Ականապաշտպան կոշիկների արդյունավետությունը և գործառնական օգուտը տակավին քննարկվում են ականազերծող մարմինների կողմից և դրանց օգտագործման մասին կան տարբեր կարծիքներ և տեսակետներ: Այսուամենայնիվ այդպիսի կոշիկներ կան, ուստի ականազերծող կազմակերպությունները կարող են գնահատել դրանց պիտանիությունն իրենց աշխատանքային միջավայրում ականազերծման գործողությունների պլանավորման ժամանակ: Մինչ օրս միայն մեկ անկախ փորձարկում է կատարվել (ԱՄՆ-ի պետդեպարտամենտի ֆինանսավորմամբ), որի արդյունքում պարզվել է, որ դրանց ձեռքբերման և նորով փոխարինման ծախսերը մեծ են, իսկ օգուտը չապացուցված: Ներկայումս վտանգ կա, որ այդպիսի կոշիկները «թվացյալ անվտանգություն» են ապահովում:

3. ԲԵԿՈՐՆԵՐԻՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

11. Բեկորային ականներն այսօր իրենց ուժով գերազանցում են բոլոր պաշտպանական միջոցների (սարքավորումների) պաշտպանիչ կարողությունը՝ բացի մասնագիտացված ՊԶՎ-ի հանդերձանքից, որն ընդգծում է համապատասխան ԳՍԸ-երի միջոցով ընթացակարգային ճանապարհով ռիսկը նվազեցնելու նախնական կարիքը:

12. Չնայած դրան, հարկավոր է նախատեսել պաշտպանություն այլ ականների անցանկալի բեկորումներից (ինչպես, օրինակ, պլաստիկ ականները) և հնարավոր երկրորդային տուժածներից, որտեղ այդպիսի վտանգը չի կարող վերացվել ընթացակարգային ճանապարհով:

13. Նման վտանգի ռիսկը նվազեցնելու նպատակով նախատեսված ԱՊՍ-ն պետք է պարունակի առնվազն հետևյալը՝

1) բալիստիկ զրահաշապիկ՝ STANAG 2920 V50 տեսակի (չոր), 450մ/վ, 1.102 գ բեկորների համար: (Բալիստիկ պաշտպանության այսպիսի փորձարկումներն իրականում չեն կրկնօրինակում ականի ազդեցությունը, սակայն կշարունակեն օգտագործվել մինչև ընդունելի այլընտրանք առաջարկվի՝ որպես միջազգային չափորոշիչ):

2) ամբողջ դեմքը ծածկող երեսակալ, սակայն, եթե սույն ուղեցույցում սահմանված չափանիշների կիրառման սպառնալիքի վերլուծությունը ցույց տա, որ ամբողջ դեմքը ծածկող երեսակալը բավարար պաշտպանություն չի ապահովում սպառնալիքի 3600 շրջագծով, ապա հարկավոր է կրել սաղավարտ: Այն պետք է ունենա ականազերծող կազմակերպության կողմից ընտրված զրահաշապիկին համարժեք բալիստիկ հզորություն:

14. Աչքերի պաշտպանիչ միջոցը պետք է լինի առնվազն 5 մմ չմշակված պոլիկարբոնատի հաստությամբ: Այն պետք է ապահովի դեմքի և կոկորդի ամբողջական ծածկույթ և կազմի դիմային պաշտպանության հանդերձանքի մասը: (Եթե մարմնի պաշտպանությունն ունի մասնակիորեն միմյանց ծածկող հատված, ապա օգտագործման ժամանակ երեսակալը պետք է տեղադրվի այդպիսի հատվածի հետևամասում):

4. ՊԱՅԹՈՒՑԻԿ ԶԻՆԱՄԹԵՐՔԻ ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ (ՊԶՎ) ՏԵՂԱՄԱՍԵՐԸ

15. ԶԶ-ի և այլ վտանգավոր զինամթերքի վնասազերծման աշխատանքների ժամանակ կարող է ավելի մեծ պաշտպանության անհրաժեշտություն զգացվել: Դա պետք է սահմանվի գործառնությունների ստանդարտ ընթացակարգերում (ԳՍԸ) և կարող է ներառել սովորական զրահաշապիկ կամ ԱՊՍ-ի որևէ այլ հանդերձանք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ
Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԲԺՇԿԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

1. Սույն չափորոշիչը կարգավորում է ականագերծման դաշտային աշխատանքների ժամանակ համապատասխան բուժօգնության ցուցաբերման հետ կապված հարաբերությունները: Այն սահմանում է շտապ և անհետաձգելի բժշկական օգնության ցուցաբերման պատրաստակամության նվազագույն պահանջները, այդ թվում՝ նախքան ականագերծման աշխատանքների մեկնարկի անհրաժեշտ պլանավորումը, ինչպես նաև ականագերծողների և բժշկական անձնակազմի ուսուցումը:

1. ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

2. Պլանավորումը և նախապատրաստումը ներառում են այն բոլոր օժանդակ միջոցառումները, որոնք իրականացնում են ԱԳԱՄ-ը և ականագերծող կազմակերպությունները՝ ականագերծման աշխատանքային տեղամասում համապատասխան բուժօգնության ցուցաբերումն ապահովելու և տեղական, ազգային և, անհրաժեշտության դեպքում, միջազգային բուժհաստատությունների, այդ թվում՝ վիրաբուժական հաստատությունների հետ համապատասխան պայմանավորվածություններ ձեռք բերելու համար:

3. Ականագերծման յուրաքանչյուր աշխատանքային տեղամասի համար ականագերծող կազմակերպությունը պետք է կազմի և իրականացնի ականագերծման պատահարի արձագանքման ծրագիր, որը պետք է սահմանի՝

1) ականագերծման աշխատանքային տեղամասի բոլոր աշխատողների, մասնավորապես, ականագերծողների և բուժանձնակազմի ուսուցման և որակավորման կարիքները և տուժածների տարահանման և նախնական բուժման պատասխանատվությունները:

2) ականագերծման պատահարի արձագանքման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ սարքավորումները և նյութերը, այդ թվում՝ առաջին բուժօգնության և բժշկական սարքավորումներ, բուժպարագաներ և դեղամիջոցներ, տուժածներին վթարի տեղամասից բուժհաստատություն տեղափոխելու համար անհրաժեշտ փոխադրամիջներ,

կապի միջոցներ՝ լրացուցիչ օգնություն կանչելու և (կամ) վնասվածքների խորության և բնույթի մասին տեղեկացնելու համար.

3) համապատասխան սարքավորումներով և բուժանձնակազմով հագեցված բուժհաստատության գտնվելու վայրը: Ականների վթարների արդյունքում վնասվածքները, սովորաբար, ծայրահեղ լուրջ են և հաճախ պահանջում են նեղ մասնագիտական վիրաբուժական միջամտություն: Համապատասխան սարքավորումներով և բուժանձնակազմով հագեցված մոտակա բուժհաստատությունը կարող է լինել մայրաքաղաքում կամ նույնիսկ հարևան երկրում:

4. Ականազերծման պատահարի նախապատրաստումը ներառում է՝

1) աշխատանքային կարգի մշակում և իրականացում, որի նպատակը թե ականազերծման վթարի և թե դրա արդյունքում մեծ թվով տուժածների ռիսկը նվազեցնելն է.

2) առաջին բուժօգնության և բժշկական հնտությունների առումով աշխատողների ուսուցումը և վթարին արձագանքելու համար անհրաժեշտ ռեսուրսների տրամադրումը.

3) ականազերծման աշխատանքային տեղամասի կառավարման փաստաթղթերի կազմումը, որոնք պարունակում են տվյալներ յուրաքանչյուր ականազերծողի արյան խմբի, վարակների (ՄԻԱՎ, հեպատիտ և այլն) և հայտնի ալերգիաների մասին.

4) հնարավորություն տուժածներին համապատասխան բուժհաստատություն կամ վիրաբուժական հիվանդանոց տեղափոխելու համար կամ ապահովագրություն՝ համապատասխան սարքավորումներով և բուժանձնակազմով հագեցված հիվանդանոց փոխադրման, վիրահատության և բուժման, այդ թվում՝ պրոթեզավորման, ծախսերը ծածկելու համար.

5) ապահովագրություն՝ ականազերծման վթարից տուժած ականազերծողներին հաշմանդամության համապատասխան նպաստ հատկացնելու համար.

6) արտակարգ իրավիճակների և տարահանման ընթացակարգերի պարբերական փորձարկում՝ վթարի պահից մինչև տուժածին համապատասխան բուժհաստատություն տեղափոխելը:

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՔԻԵՆԱՅԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

5. Հարկավոր է կազմել աշխատանքի հիգիենայի պլան, որը պետք է նախատեսի հետևյալ միջոցառումները՝

1) բոլոր աշխատողների ծանոթացում առողջությանն սպառնացող վտանգների հետ, այդ թվում՝ ականազերծման տարածքում առկա միջատների և ջրածին հիվանդությունների, թունավոր կենդանիների կամ միջատների հետ.

2) հարմարության և անհրաժեշտության դեպքում կանխարգելիչ միջոցառումների անցկացում.

3) առողջության պարբերական ստուգումներ.

4) ժամանակակից պահանջները բավարարող ներարկումներ փայտացման, դեղին տենդի, հեպատիտի դեմ տեղական կամ միջազգային առողջապահական մարմնի ցուցումների հիման վրա:

3. ՏԱՐԱՀԱՆՈՒՄԸ

6. Ականազերծման վթարի արձագանքման պլանը պետք է պարունակի հետևյալ պարտականությունների մասին դրույթներ՝

1) տեղանքի արտակարգ իրավիճակների արձագանքման ընթացակարգերի կառավարում, որոնք կարող են ներառել օրինակ վտանգավոր տարածքից տուժածների տեղափոխման ընթացակարգերը կամ ականազերծման մեխանիկական սարքավորումներից տուժածներին դուրս հանելու ընթացակարգերը.

2) տուժածներին տեղում ցուցաբերվող առաջին բուժօգնությունը.

3) տուժածների տեղափոխումը վիրաբուժական հաստատություն, որտեղ կարող է ցուցաբերվել համապատասխան վիրաբուժական օգնություն, այդ թվում՝

ա. պլանավորված երթուղու և փոխադրամիջոցի մասին մանրամասն տվյալներ,

բ. ճանապարհին վառելիքի, սննդի և վերանորոգման (տեխսպասարկման) կետերի առկայությունը.

4) վթարի վայրից վիրաբուժական հաստատություն տուժածի տեղափոխման ժամանակ ցուցաբերվող բուժօգնությունը.

5) տեղում ցուցաբերվող բուժօգնության սարքավորումներ, նյութեր և դեղամիջոցներ.

6) շտապ և անհետաձգելի բուժօգնության փոխադրամիջոց, այդ թվում մասնագիտական բուժասրքավորումներ և հարմարանքներ՝ տուժածին համապատասխան բուժհաստատություն տեղափոխելիս կիրառելու համար.

7) տեղում և ճանապարհին հաղորդակցվելու նպատակով ռադիոկապի միջոցների նախապատրաստում և պահպանում:

4. ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂ ՎԹԱՐԻՆ ԱՐՁԱԳԱՆՔԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

7. Ականազերծման բոլոր աշխատանքային տեղամասերում պետք է լինեն՝

1) ականազերծող թիմեր, որոնք ունեն ռեսուրսներ հետևյալ աշխատանքները կատարելու համար՝

ա. ականազերծման վթարից տուժածին առաջին բուժօգնության ցուցաբերում,

բ. վտանգավոր տարածքից տուժածներին տարահանում,

գ. տուժածների տեղափոխում համապատասխան բուժհաստատություն, վիրաբուժական հաստատություն կամ որևէ այլ հավաքակայան, որտեղից տուժածին համապատասխան բուժհաստատություն են տեղափոխելու,

դ. տուժածներին ճանապարհին անհրաժեշտ բուժօգնության ցուցաբերում,

ե. կապ բուժհաստատությունների, այլ արտակարգ (շտապ) օգնության ծառայությունների կամ համակարգող կազմակերպությունների հետ, որոնք պատասխանատու են ականազերծող կազմակերպություններին վթարի արձագանքման օժանդակություն ցուցաբերելու համար.

2) աշխատողներ, որոնք պատրաստված են և ունեն սարքավորումներ կատարելու համար հետևյալ աշխատանքները՝

ա. ճիշտ ախտահանել և վիրակապել վերքերը,

բ. կայուն ֆիքսել կոտրվածքները,

գ. տալ ցավազրկող դեղեր, հակաբիոտիկներ և փայտացման դեմ կանխարգելիչ դեղեր, եթե տուժածն այլ կերպ չի կարող ստանալ դրանք՝ վթարից հետո վեց ժամվա ընթացքում:

5. ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ ՓՈՔԲ ԹԻՄԵՐԸ

8. Նպատակահարմար չի համարվում ականազերծող փոքր խմբերին հատկացնել առաջին բուժօգնություն ցուցաբերելու համար նախատեսված հատուկ խումբ, այդ թվում՝ օրինակ, հետազոտում կատարող թիմերին կամ ՊԶՎ թիմերին, որոնք կարող է պահանջվել, որ երկար ժամանակ աշխատեն ինքնուրույն և հեռավոր տարածքներում:

9. Նման դեպքերում ականազերծող կազմակերպությունները պետք է ապահովեն, որ ականազերծող փոքր խմբերում լինեն՝

1) առաջին բուժօգնություն ցուցաբերելու դասընթաց անցած և ռեսուրսներ (այդ թվում կապի միջոցներ) ունեցող աշխատող, որը կարող է արձագանքել ականազերծման

վթարին, տեղափոխել տուժածին միջանկյալ բուժհաստատություն կամ վիրաբուժական հիվանդանոց.

2) բավարար թվով աշխատողներ՝ արտակարգ իրավիճակների արձագանքման ընթացակարգերն իրականացնելու և կառավարելու համար, այդ թվում այն կարգերի, որոնք նվազեցնում են ականազերծման միջադեպից մեծ թվով տուժածների ռիսկը:

10. Բացի դրանից, երբ թիմում միայն երկու մարդ կա, երկուսն էլ պետք է անցած լինեն առաջին բուժօգնության դասընթաց և կարողանան իրականացնել արտակարգ իրավիճակների արձագանքման ընթացակարգեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ